Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17396

1899

37
U-13

2010

37
Ս-13

2001

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՍԱԼՄԱՍՏԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ „ՐԱՖՖԻ“ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

2001

Այն կանոնադրութիւնը հաստատուած է
Աստուածանի Թեմական Առաջնորդից

ԳԱՂՈՒՆ

1899

Տպարան Դաւթիժոռ Հայոց Աբրահամեան Դպրոց

71087

37
1-13
Ա. Ա

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՍԱԼՄԱՍՏԻ
«Հայուհեաց Բար. ՐԱՖՖԻ Ընկերութեան»

I
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սալմաստի «Հայուհեաց Բարեգործական Ռաֆֆի Ընկերութեան» նպատակն է օգնել՝ Հայ կղական սեռի չքաւոր դասակարգի ազգային կրթութեան գործին և նպաստել ընդհանրապէս Հայ կանանց և օրիորդների մէջ անհրաժեշտ արհեստներ տարածելով:

II
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վերև յիշեալ նպատակներին հասնելու համար՝ ընկերութիւնս իւր միջոցներին նայելով՝ հեռզհեռէ ժամանակի ընթացքում ընդհանուր ժողովի որոշմամբ լայնացնում է իւր գործունէութեան շրջանը բանալով գանազան գիւղերում իգական դպրոցներ, միևնոյն ժամանակ գնելով եղած իգական դպրոցներին թէ նիւթա-

Ա. ՍԱՄՍՈՆ

պէս և թէ բարոյապէս։

3 Բացէ անում **ԿԱՐ** ու **ՉԵՒԻ** դպրոցներ, արհեստանոցներ և այլն։

4 Օգնում է չքաւոր ընդանիքներին նիւթականապէս կամ այլ կերպ։

5 Օգնել այն անձնաւորութիւններին, որոնք կը կամենան վարժուհութեան պաշտօն վարել Պարսկաստանում։

6 Յողովրդական աղէտների ժամանակ իւր կարողացածին չափ նպաստել վտանգի առաջն առնելու համար։

III

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՍՈՑԹՆԵՐԸ

7 Ընկերութեանս անդամները բաժանվում են երեք կարգի՝ ա. հիմնադիր անդամներ, իսկական և պատուաւոր անդամներ.— Անդամների թիւը սահմանափակուած չէ։

8 Ընկերութեան նիւթական կարողութիւնը կազմում են ա. հիմնադիր, իսկական և պատուաւոր անդամների տարեկան և միանուագ վճարները, բ. միանուագ նուէրներ գրամով, գաղական պիտոյքներով և նիւթեղէնով։ գ. Վիճակախաղից գոյացած արդիւնքը։ դ. Ընկերութիւնը իւր հասոյթները ընդլայնացնելու հա-

մար դիմում է նաև երեկոյթների, թատրոնների, պարահանդէսների և ժողովարարութեան և այլն և այլն:

9 Ընկերութեան դումարները պահւում են ապահով առևտրական տներում, և կամ մասնաւոր ապահով վաճառականի մօտ, ընկերութեան անվամբ: Վարչութեան որոշմամբ գանձապահի մօտ մնում է մասնաւոր դումար ընթացիկ ծախքերի համար:

IV

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՐՈՒՔԻՆԸ, ՆՈՅԱ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

10 Ընկերութեան **ՀԻՄՆԱՏԻՐ** անդամներ կոչւում են նրանք, որոնք առնուազն վճարում են տարեկան 12 ղրան:

11 Խոկական անդամներ լինում են միմիայն իգական սեռի, և վճարում են տարեկան 6 ղր.:

12 Պատուաւոր անդամ կարող են երկու սեռից էլ լինել, դոքա ընտրւում են այն անձինք, որոնք ընկերութեանը մի շօշափելի ծառայութիւն կանեն և կամ որոնք նուիրում են ընկերութեանը միանւագ առնուազն 25 թուման:

13 Հիմնական և Խոկական անդամներին հաստատում է Վարչութիւնը, իսկ պատուաւոր անդամ ընտրում է ընդհանուր ժողովը:

14 Ընկերութեան մէջ աչքի ընկնող պարտականց անդամները ենթարկւում են ընդհանուր ժողովի դատի և նրա որոշմամբ արտաքսւում ընկերութիւնից:

ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

15 Ընկերութեան գործերը կառավարում են ընդհանուր ժողովում ընտրւած նոյն ընկերութեան անդամներից 7 հոգի, որոնք բացառապէս լինելու են իգական սեռից:

16 Վարչութեան անդամներն իրանց միջից ընդրում են մէկին Նախագահ փոխ-նախագահ, Գանձապահ և Քարտուղար, եթէ պատահեց, որ վարչութեան անդամների միջ չկան քարտուղարութեան պաշտօնի համար ձեռնհաս անձն, վարչութիւնը այդպիսի դէպքերում կարող է մի պարոնի հրաւիրել:

17 Ընդհանուր ժողովը դաղտնի քուէարկութեամբ երեք տարի ժամանակով ընդրում է վարչութեան անդամներին և փոխանորդներին:

18 Եթէ վարչութեան անդամներից մէկը կամ մի քանիսը հեռանան կամ որ և է պատճառով երկար ժամանակ ժողովներին մասնակցել չը կարողացան, նրանց փոխարէն կանցնին փոխանորդները հերթով նայած իրանց ստացած քուէների:

19 Վարչութեան մէջ բոլոր գործերը վճռա-

ուումն ձայնելի մեծամասնութեամբ իսկ ձայնելի հաւասարութեան դէպքում նախագահի ձայնին առաւելութիւն է դրւում 1 ½ ձայն վերապահելով նրան: Աշխատանի վճիռներն օրինաւոր են համարւում այն դէպքերում միայն, եթէ ներկայ է անդամներից գոնէ ⅔ հոգին ամենապակասը:

20 Աշխութեան պարտաւորութիւններն են.—

ա. աշխատել ընկերութեան անդամների թիւն ու դրամական միջոցները աւելացնել:

բ. Հսկել և օգնել այն դպրոցների բարեկարգութեան, որոնք պահվում են ընկերութեան հաշւով:

գ. Հսկել ընկերութեան դրամների և գործերի ամբողջութեանը, և պատասխանատուութիւնը ամբողջովին իր վրայ վերցնելով:

դ. Իւրաքանչիւր տարի ներկայացնել ընդհանուր ժողովին՝ ընկերութեան միամեայ գործունէութեան հաշիւն և ապագայ ծրագրաւորելիք գործունէութեան հաշուեկշիռը:

21 Աշխութեան իրաւունքներն են.—

ա. Թէ դրամով և թէ գոյքերով օգնել պարտկատանի բոլոր Հայ ծխական դպրոցներին, համաձայն ընդհանուր ժողովում հաստատուած հաշուեկշռին:

բ. Ընդունել և հաստատել նոր անդամներ:

գ. Յօգուտ ընկերութեան կազմել նուագահան-

դէսներ, ներկայացումներ, պարահանդէսներ, զաստիսուութիւններ և այլն։

22 Վարչութեան նախագահի պարտաւորութիւնն է հսկելու, որ ճշտութեամբ գործադրուին այս կանոնագրի բոլոր յօդուածները, ընդհանուր ժողովի և վարչութեան վճիռները։ Նախագահն է վարում բոլոր բանակցութիւնները և բանաւոր յարաբերութիւնները զանազան հասարակութիւնների և մարդկանց հետ։

23 Նախագահն է նշանակում սովորական և ընդհանուր ժողովները։

24 Գանձապահը պահում է Ընկերութեան դրամական գործերը և հաշիւները, նա ընդունում է տարեկան վճարներն և նուէրները. և ծախսեր է անում վարչութեան կարգադրութեամբ։

25 Քարտուղարի պարտականութիւնն է արձանագրել վարչական նիստերի որոշումները, նա է ընդհանրապէս վարում ընկերութեան գիւանը. պահում է գիւանատան գրութիւնները և ընկերութեան կնիքը։

26 Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար ընկերութեան գործունէութեան հաշիւները շինելը կազմում է քարտուղարը, ներկայացնում է նաև մի տեսութիւն ապագայ ենթադրելիք գործունէութեան և ապասելիք եկէքի մասին։

27 Քարտուղարին եթէ կարիք ղ'գայլ վարձ

նշանակել, այդ պէտք է լինի ընդհանուր ժողովի որոշմամբ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

28 Ընդհանուր ժողովները ունի իր նախագահն ու քարտուղարը, որոնք ամէն անգամ ընտրւում են այդ իսկ ընդհանուր ժողովներից :

29 Սովորական ժողովները հրաւիրւում են երբ վարչութիւնը անհրաժեշտ է համարում այդ և կամ երբ առնւազն 10 անդամների սոսրագրութեամբ դրաւոր առաջարկութիւն կը լինի վարչութեան : Ընդհանուր ժողովի կայանալու մասին պիտի յայտարարւի մի շաբաթ առաջ :

30 Ընդհանուր ժողով կայացած է համարւում, երբ քաղաքում եղող անդամների առնւազն կէսը ներկայ է :

Ծանօթ. — Հակառակ դէպքում ժողովը յետաձգւում է մի շաբաթով, այս անգամ արդէն անդամների սահմանւած թիւը չի պահանջւում : Ժողովի համար վարչութիւնը լուր է տալիս բոլոր անդամներին :

31 Տարեկան ընդհանուր ժողովները հրաւիրւում են ամեն տարի Փետրվարի սկզբում քննելու և հաստատելու. —

ա. Տարեկան հաշիւները և ընկերութեան Մուտքն ու Ելքը, այս նկատմամբ յանձնաժողով է

կազմում առնւազն երեք հոգուց բաղկացած, որոնք վարչութեան անդամ չը պէտք է լինին, վերատեսուչը յանձնաժողովին դրւում են բոլոր մատեանները քննութեան համար։—

Բ. Վարչութեան համար անդամներ և փոխանորդներ են ընտրւում։

Գ. Քննում է և հաստատում վարչութեան կամ անդամների առաջարկութիւնները, խորհրդակցում է նորանոր դպրոցներ բանալու և կամ եղածները դոցելու համար, և կամ վերջապէս ընկերութեան անշարժ կայքեր առնելու և ծախելու ենթադրութիւնների մասին.—

Դ. Եթէ անհրաժեշտ է փոփոխութիւններ է մտցնում կանոնադրութեան մէջ։

32 Ընդհանուր ժողովի մէջ հարցերը վճռւում են ձայների առաւելութեամբ Նախագահը կէս ձայն աւելի ունի։

33 Ընկերութիւնն ունի կնիք այս անվամբ «Սա լմասպի Հայոց-հեսաց բարեգործական «ԲԱՓԻ» ընկերութեան. 1891 թ. 15 Փեբրվարի։

34 Եթէ որ և իցէ կերպով ընկերութիւնը ընդհատէ իւր գործունէութիւնը այն ժամանակ նրայ բոլոր առերես ունեցած գոյքը և կայքը անցնում է յօգուտ մի օր. դպրոցի. որին կը որոշէ ընդհանուր ժողովը։

Այն երեսուն և չորս յօդուածից բաղկաց-

եալ կանոնադիրն Սալմաստի Ղ՝ալասար գիւղի Ս՝այուհեաց Բարեգործական **ԸՆԳԿԻՐ** Ը՝նկերութեան Սալմաստի գաւառի իգական սեռին կրթութեան և դաստիարակութեան գործին համար օգտակար և յառաջ տանող մի գործունէութիւն նկատելով ամենայն հաճութեամբ պաշտօնապէս հաստատումենք

Թեմակ. Առաջնորդ Ս՝այոց Աստուածածնի.
Սահակ Եպիս. Այվազեան
(կնիք)

31 Օգոստոս 1899
Ի Փայաջուկ գիւղ
Սալմաստ

2013